Թ. ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 30 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1906 ԹԻՎ 864

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 «
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տլ.
վեցամսեայ 1.50 «

Ծանուցմուն տողը սովորական երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է։ Երեքից աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լլայ։

—o—

Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ է

Դրամական եւ գրական ղրկելիք հասցէն

Редакция на вѣстникъ "Шаржумъ", Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք հաս չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԼՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՏՕՔ. Ն. ՍՕԹԻՐՕՖ

Վիրաբոյժ – Դանկաբարձ

Վառնա Մարիա-Լուիզա, փողոց թիւ 8 (Զինուորական քլինիկի մօտ)

Հիւանդ կընդունի ժամը 2—4 կէս օրէ վերջ

4—5

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բրոշիւրը յանձնված է տպագրութեան։

Բրոշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և մրեւնոյն ժամանակ փաստել թէ՝ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց։ Բնական է որ բրոշիւրի մէջ փաստող դոկիւմանները մեծ տեղ պիտի գրաւեն։

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր։

Դիմել «Շարժումի» Խմբագրութեան

ՀՍՑ ԴԵՂԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ս. Դանարեան եւ Ընկ.

Սօլանոքա փողոց (Պալըգ բազար) թիւ 524 Ա. ուշասթքին ճիշտ տակը

Նոր բացուած սոյն գեղավաճառատան մէջ կը գտնուին մաքուր եւ առաջնակարգ դեղերու մեծաքանակ մթերքէ զատ թարմ հանքային ջուրեր, եւրոպական ամէն տեսակ էսբէսիալիսթէներ, բժշկական աճառներ, քաուչուքի ապրանաց վերաբերեալ բոլոր առարկաներ, իրիկաթէօրներ, պիպերօններ, ջերմաչափներ եւն եւն։

Առանցմէ զատ կը գտնուի նաեւ ուսանկարչութեան, ոսկերչութեան եւ առհասարակ արհեստի վերաբերեալ քիմիական մաքուր բաղադրութիւններ,

Թարմ եւ անարատ

Նորվէկիայի ձկան իւղ

Ցարդ դեղերու սղութենէն դժգոհութիւն յայտնողները կը բաւէ որ ուրիշ տեղէ մը գնում ընելէ առաջ անգամ մը դիմեն նոր դեղավաճառատունս, ուր ապահովաբար պիտի գտնեն գներու աժանութեան հետ դեղերու ընտրելագոյնը։

Շրջակայ քաղաքներու եւ գիւղերու մէջ դեղերու կրկնավաճառումով զբաղող խանութպաններու համար մասնաւոր զեղչ։

Ցանձնարարութիւնք փութով եւ ճշդութեամբ կը կատարուին։

1906—1907

Երկու օրից Նոր Տարի է. անցեալ տարին շատ նշանակալից եղաւ ամբողջ հայութեան համար։ Տաճկահայութեան կեանքում ոչ մի փոփոխութիւն չը նկատվեց դէպի լաւ, ընդհակառակը կացութիւնը աւելի վատթարացաւ, և շատ նահանգներում հայերի դժբախտութեան վրա աւելացել է սովը և զօրացել գաղթականութեան հոսանքը... Բնութիւնն էլ՝ օգնում է Սուլթանին հայազինջ քաղաքականութեան մէջ։

Մխիթարական երեւոյթը այն է, զոնէ ըստ երեւոյթին, որ յեղափոխական մամուլը կուսակցութիւնների համերաշխ գործունէութեան խնդիրը մէջ տեղ դրից։ Ի մեծ զարմանս աշխարհի, ամենազօրաւոր, ամենակարող, ամենամոլի և բոլոր հայ յեղափոխական տարրերին իր մէջ միայն ձուլելու որոշում և յաւակնութիւն ունեցող Դաշնակցութեան օրգանները այնքան տուին այդ կոչին, ու այսօր «Զայն Հայրենեաց» և «Հայրենիք», Հնչակ, Դրօշակ և Ազատ Բեմ հրապարակով պատրաստութիւններ են տեսնում գրկախառնվելու։ Դաշնակցութեան ներկայ համեստութիւնը հասկանալի է. «ամբողջ Կովկասը մերն է» բոռացող Վռամեանները այսօր տեսնում են որ Կովկասը այլեւս «հրաժարիմք ի սատանայէ» է ուղղում Դաշնակցութեան հասցէին և համերաշխութեան կոչի հանդէպ անտարբեր գտնվելը նշանակում է ծանր գերեզմանաքար դնել Դաշնակցութեան վրա։

Այսպէս թէ այնպէս. ցանկանք որ համերաշխութիւնը իրօք տեղի ունենայ, որովհետեւ տաճկահայ դատը առանց իր յեղափոխական զաւակների համերաշխութեան ոչ մի դրական արդիւնք չը պէտք է տայ. ընդհակառակը միայն վնաս։ Ուրեմն մաղթենք որ դալիք տարու դաշնակցական, հին և նոր հնչակեան գործիչները համերաշխութեան անքակտելի կապերով կապված թողնեն արտասահմանը և մանեն երկիրը ապրելու և գործելու այն ժողովրդի հետ, որի բարօրութիւնը ստեղծելու համար են երեւան եկել, և որին անիծում, մեղադրում են դաղթելու և թուլութեան մէջ։

Այո, դժուար է երկրում ապրել և գործելը. բայց յեղափոխականների համար այդ դժուարութիւնները գոյութիւն չը պէտք է ունենան, մանաւանդ վերջապէս իմանալու են թէ երկրից հեռու ապրել, յեղափոխական ճառեր արտասանել ու դժուրութիւնների չը դիմացող և գաղթող հային անիծելը ոչ թէ յեղափոխականութիւն է այլ բացարձակ շարլատանութիւն։

Համերաշխացած յեղափոխականները երկրում պէտք է կըտնրվեն. ոչ հատու կտուր ռումբներ պայթեցնելու, ոչ հրոսախմբեր անցնելու և ոչ ցոյցեր կազմակերպելու, այլ ժողովրդին ինքնապաշտպանութեան պատրաստելու համար, որը յարմար պարագային կարող է և ըմբոստութեան դրօշը բարձրացնել, եթէ երբ և իցէ ներկայանայ այդպիսի մի յարմար պարագայ ճախճախված, նիւթապէս բոլորովին ընկած և դիւանագիտական խաղերի գործիք լինելու վիճակված տաճկահային..

* * *

Կովկասահայութեան կեանքի մէջ աւելի խոշոր և նշանակելի երեւոյթներ տեղի ունեցան անցնող տարվան մէջ։ Առաջինը էջմիածնի համագումարն էր որ վերջերս յանդեց շնորհիւ անտակտ դաշնակցական շէֆերի թափագեօզութեան. երկրորդ խոշոր երեւոյթը եղաւ Կովկասեան հայ մամուլի քննադատական դիրքը դէպի Դաշնակցութիւնը։

Այդ խիստ քննադատութեան շնորհիւ դաշնակցութիւնը երեւան եկաւ իր իսկական կերպարանքով և տաճկահայ դատը խիստ անալիզի ենթարկվելով որոշվեց Կովկասահայի բռնելիք դիրքը դէպի այդ դատը։ Պարզ է թէ այսուհետև Կովկասահայը տաճկահայ դատին կոգնէ միայն այն ճամբով, ձևով և չափով որ իրօք կարողանայ օգտակար լինել իր տաճկահայ եղբայրների ժողովրդական կացութիւնը բարելաւելուն։

Յեղափոխական առասպելները ստեղծված դաշնակցութեան վարձկան օրգանների և գործիչների միջոցով օդը ցնդեցին և Կովկասահայից այլեւս անկարելի է դրամական օգնութիւն ստանալ զանազան խմբեր անցնելու և ցոյցեր կազմակերպելու համար, որոնց ՀԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ ապացուցված էր դեռ տաս տարի առաջ։

Ուրեմն մաղթենք որ Կովկասահայը այսուհետև գիտակցօրէն օգտակար հանդիսանայ Մասիսի միւս կողմում տանջվող իր եղբայրներին որոնք ժողովրդական տանջանքների բոլոր տեսակները վայելեցին և դեռ վայելում են Թուրքերի ձեռքից մասամբ իրենց ազատարար հրեշտակներ ներկայացողների անմիտ եռանդի և տհաս գործունէութեան շնորհիւ։

* * *

Հայ գաղութները Ամերիկայում, բալկաններում և Եգիպտոսում կենսական նորութիւններ չունեցան։

Այդ գաղութների կեանքն է յեղափոխական լարաններ, որոնց մէջ գիտակցութիւն զարթեցնելու ոչ մի բան կայ. ներկայացումներ, դաշտահանդէսներ բոլորը յեղափոխութեան անունով հանգանակութիւններ, որոնք ծախսվում են միշտ երկրից դուրս, անթիւ գործիչներին, ներկայացուցիչների, թերթերի և հրատարակութիւնների վա... Վերջապէս մի քիչ էլ թղթական վարժապետական և առաջնորդական խնդիրներ...

Այդ խեղճ, հայրենիքից հեռու գաղութների գիտակցութիւնը իրօք բարձրացնելու համար ոչ մի գրական ձեռնարկ. հաշիշ միայն տրվում. հաշիշ դիւրութեամբ փող կորզելու համար.

Մաղթենք որ յեղափոխականների համերաշխութիւնը իր բարերար ազդեցութիւնը ունենայ և այդ գաղութների վրա, նոր Դարում։

ՎԱՐԴՈ

ՌՈՒՍՃՈՒՔԻ «ԱՐԱՔՍ»

Մենք շատ անգամներ գովեստ լրսած էինք Ռուսճուքի «Արաքս» նուագախմբի մասին. բայց բախտը չէինք ունեցած լսել զայն. որուն տարիէ մը ի վեր հետաքրքրուած կսպասէինք։

Նախապէս եղած կարգադրութեան մը հաւանայն, ամսոյս 24ի երեկոյեան կառախումբով տեղս հասաւ նուագախումբը՝ իր 23 անդամներով եւ իր յարգելի Բարէյլ–Մայսթոր Ֆ. Շարասի հետ. եւ 25ի երեկոյեան այսինքն պուլկարաց ծննդի առաջի գիշերը նուագահանդէս մը սարքեց «Բրօշէքի» նորակառոյց սրահի մէջ, որը կրնամ ըսել թէ փայլուն անցաւ։

Ժամը 9ին արդէն սրահը պէտք եղած չափով լեցուած էր. ու հանդիսականները հետաքրքրութեամբ կրսպասէին վարագոյրը բացուելուն. ներկաներուն մէջ կը տեսնուէին ամէն դասակարգի պատկանող անձնաւորութիւններ. հայ թէ պուլկար. բայց խումբի անդամներէն մէկ պատրոնին ուշանալուն պատճառաւ չը կարողացան ճիշտ 9ին սկսիլ։ Հետեւաբար ժամը 9 ու կէսին վարագոյրը բացուելով իրենց խմբի պաշտօնական «Արաքսի քայլերդով (որը Պարոն Շարասի հեղինակութիւնն է) հանդէսը սկսաւ, եւ յաջորդաբար նուագեցին Մարթա օբեռան, որը յաջող անցաւ. այս կարգիններէն է «Թրավիաթայը, Խրվաթսքա քօլօն, Կարավանը եւ մէկ քանի ուրիշ կը տարներ - որով քանիցս որոտընդոստ ծափեր խլեցին ներկաներէն։

Միայն տհաճոյ երեւցաւ քառթավաճառութիւնը, որ ներկաներուն վրայ շատ գէշ ազդեցութիւն ըրաւ. եւ միայնգամայն անպատուաբեր ալ էր նուագախմբին. քանի որ այդ միայն «վառիլթէնելու մէջ սրէնք դարձած է։

Շիտակը ըսելով գովելի է Ռուսճուքի երիտասարդաց եռանդը որ կուզեն եւ միշտ ալ փափագող են ինչպէս կերեւի գեղարուեստով հետաքրքրել հայ երիտասարդները ու այդ պատճառաւ ալ ահագին ծախքերու ենթարկուած են։

Մենք Վառնացիներս ալ ունինք երեք հատ նուագախմբեր, «Սոխակ», «Փողթան» եւ "Արաքս» եթէ այս երեքը իրարու մօտ բերենք կրկին բան մը դուրս չիգար. պատճառը. պատճառը շատ պարզ է։ Կարգ մը պարոններ ...ուհիներու զգլխիչ շոյեանքներէն շլմորած, նոյնիսկ իրենց գոյութիւն անգամ մոռցած են, մաս մըն ալ ունինք «ջոջերուն հովեր առնողներ որոնք անպատուաբեր կը նկատեն այդպիսի ձեռնարկներու մէջ գտնուիլ. քննադատներ ալ չեն պակսիր մեր մէջ, բայց իրենց մաը մոխիրը չեն թափիր. ըսել է թէ ասոնցմէ ալ իւղ չելլեր։ Հա՛ մոռցայ լսել՝ պակաս չեն նաեւ կուսակցամոլները որոնք չեն ուզեր գիտնալ ու տեսնալ այն բանը որ իրենց կուսակցութեան չը վերաբերիր ու դեռ չատե՛ր խաղամոլներ, գինեմոլներ. եթէ ասոնց բոլորն ալ հաշուելու ելլենք պէտք է մէկ քանի օր առաջ սկսինք հաշուել որպէս զի մոռցուածներ չգտնուին։

Այս ամթիւ Ռուսճուքի երիտասարդութիւնը մեզի օրինակ ունենալով, քիչ մը զգաստանանք. ու մէկ սեղանի շուրջ հաւաքուելով տեսնանք թէ ինչ բաներ ունինք պակաս, քանի որ իբր հայ անհատ հաւասարապէս ամէնքիս ալ վրայ պարտք կը

վառարանի առջեւ նոտած է մեր բարեկամ Սուրէնը. Նրա ծնկների վրա՝ խաղալուց յոգնած, հանգստանում է երեք չորս տարեկան կարմրաթուշիկ, առատ մազերի փնջերը ճակատին շաղ ընկած մանչ երեխան Սուրէնը մերթ դիտում է զաւակին, մերթ վառարանում պարող բոցերը, որոնք այլանդակ ձեւեր են ստանում վառարանի մէջ սողոսկած մրրիկի յորձանքներից։

— Վերջանում է եւ այս տարին, մտածում է Սուրէնը, զնում է միանալու նախորդ ծիգ տարիներին... այսօր հիսաթափումների մի խոշոր գումար կայ առջեւս... սապո՛ի պղպջակների նման ցնդած հանրային բարօրութեան համար ունեցած երազների մի կոյտ. որոնց ամեն մէկի իրականացնելու համար ահագին ուժեր են սպառվել եւ դեռ պէտք է

ծանրանայ, որը մինչեւ օրս երեսի վրայ ձգած ենք։

Կը լսենք թէ «Արաքսը» ներկայացման զուտ արդիւնքը Վառնայի ազգաստախնամին թողած է մօտաւորապէս 100 ֆրանք մը։

Շաւս

Վառնա, 27 դեկ. 1906

ԱՍՏՈՒԱԾ ՄԱՐԴՈՒ ՎԵՐՋԸ

ՇՈՒՐԻ ԱՆԻ

Ես մի կին էի ճանաչում, մի շատ հարուստ կին, որը հայրենական ահագին կարողութեան միակ ժառանգն էր։ Բայց նա բացի հարուստ լինելուց եւ իր ապրած քաղաքում նաեւ առաջին գեղեցկուհին էր համարում։ Հէնդ այդ երկու հանգամանքների համար էլ նա սաստիկ սիրուած էր իր շրջապատից. ամենքն էլ նրան յարգում, սիրում, գուրգուրում եւ երես էին տալիս։ Թէեւ նրա բնաւորութեան մէջ մի քանի նի շատ այլանդակ ու անհամակրելի գծեր կային, բայց նրա գեղեցկութիւնն ու հարստութիւնը ամէն բան մոռանալ էր տալիս եւ մարդիկ մեծ ներողամտութեամբ էին վերաբերվում նրան։ Սակայն Դաշան, (այդպէս թող անուանենք այդ կնոջ անունը, որ ես մոռացել եմ) չկարողանալով ըստ արժանոյն գնահատել իրան շրջապատողների անկեղծ զգացումները.—ինչպէ՞ս այդ յաճախ է պատահում կեանքի մէջ.—գնալով աւելի ու աւելի չփացաւ, գոռոզացաւ եւ սկսեց իր անաւելի ու անհամ կապրիզներով սաստիկ ձանձրացնել նրանց։ Այդ հանգամանքի շնորհով Դաշայի ծանօթներից շատերը հետզհետէ սկսեցին կտրել իրանց յարաբերութիւնները նրա հետ եւ երես դարձնել նրանից. Այդ բանը նկատելով Դաշան, իհարկէ մեծ ցաւ ըզգաց իր սրտում, բայց եւ այնպէս նա այլեւս անկարող էր իր սաստիկ կարգացած կապրիզների վրայ իշխել ու սանձ դնել իր կրքերին։ Ի լրումն այդ դժբախտութեան, 50 տարեկան հասակում Դաշան ծաղիկ հանեց եւ բոլորովին այլանդակ կերպարանք ստացաւ, իսկ դա իհարկէ, պակաս չը նպաստեց, որ նրա ծանօթների ու շրջապատողների թիւն էլ աւելի նուազէր։

Բայց դրանով էլ չը վերջացաւ Դաշայի դժբաղդութիւնը։ Ծաղիկի՞ հետեւանքն էր արդեօք, թէ մի այլ հիւանդութեան,—այդ ոչ ոք չիմացաւ,—միայն թէ նա մի շատ աննօրմալ եւ կիսապսիխոպատ դրութեան մէջ ընկաւ, որ եւ՝ առիթ տուեց նրա մօտիկ բարեկամներին ու ազգականներին Դաշայի վրայ դատարանի միջոցով խնամակալութիւն հաստատել, որը պէտք է նրա հարստութեան ու բոլոր գործերի վրայ հսկէր, որպէս զի Դաշան մի որ եւ է յիմարութիւն ու խենդութիւն չանի։

Աննօրմալ ու մանաւանդ մեծ ժառանգութիւն ունեցողի վրայ խնամակալութիւն հաստատելը, ինչպէս գիտէք, մի շատ սովորական բան է։ Բայց եռ հէնց այդ Դաշային յիշեցի երբ տեղեկացայ այն ժողովի մասին, որ ամսոյս 3ին, կիրակի, տեղի էր ունեցել եւ ուր որոշուել է քննիչ մասնաժողովներ հաստատել Դաշնակցութեան ձեռքով կատարուած «կեղեքումների, հարստահարութիւնների ու ոճիրների» ընդհանուր քննութիւն կատարել եւ մի մշտական բիւրօ հաստատել Դաշնակցութեան արարքները կօնտրոլի տակ առնելու համար...

Դաշնակցութիւնն էլ Դաշայի օրին ընկաւ վերջապէս, մտածեցի ես։ Եւ իսկապէս, որպիսի ճակատագրական նմանութիւն։ Ախր դեռ հազիւ մի տարի է անցել այն օրից, երբ Դաշնակցութիւնն էլ Դաշայի նման հասարակութեան աղն ու ծաղիկն էր համարում. ամենքի գուրգուրանքի ու փայփայանքի առարկան էր եւ բոլորն էլ նրա անուանումն էին երգում ու նրա բոլոր կապրիզները մեծահոգութեամբ տանում. իսկ այսօ՞ր։

Օհ, այսօր նա էլ դժբախտ Դաշայի նման չոփուրացել է եւ այնպիսի մի աննօրմալ բան է դառել, որ հէնց երեկուան իր ամենամօտիկ բարեկամները տիպած են նրան էլ Դաշայի նման խնամակալութեան տակ առնելու։ Ի՞րպիսի հեղնութիւն բախտի.. Մի՞թէ անցեալ տարի այս ժամանակ կարելի էր այդպիսի մի բան դուշակել ու ենթադրել անգամ... Դաշնակցութիւնը խնամակալութեան տակ է առնվում!!! Այն Դաշնակցութիւնը, որը դեռ երեկ ամբողջ հայ ազգի միահեծան տէրն էր համարում իրան, մի կատարեալ հայկական կառավարութիւն էր եւ ամբողջ ազգի ճակատագիրը իր թաթերի տակն էր առել, այսօր, իրրեւ մի կիսախելագար ու վնասակար անձնաւորութիւն. Նոյն

սպառվեն...

Դժբախտ էինք մենք. ծնվեցինք երազները իրականութեան կեղեւով մատոչէն պատված պատմական շրջանում, որ մեզ ժառանգութիւն էին թողել մեր երազող նախորդները. այս մարդիկ, որոնց պատկերները մինչ այսօր իմ եւ ցեղիս կուռքերն են եղել եւ իրենց դիմագծերով սենեակիս պատերի վրա երազականի մի ինչ-նարան եւ ուղղութիւն են ներկայացնում։ Երազեցինք եւ մենք, միշտ հեւաեւելով մեզ մատնանշված ուղուն. միշտ երեւակայելով թէ ահա պիտի հասնինք փայփայենք նրա մետաքսաթել մազերը համբուրենք նրա դիւթիչ աչքերը. [ու կարենս հասանք էլ. սակայն ոգին անհետացաւ, յօդս ցնդեց, ինչպէս բոլոր ոգիները, երազները. ցնորքները... ու պարզվեց՝ որ նա չօշափելի իրականու-

---

չայի դժբաղդութիւնը։ Ծաղիկի՞ հետեւանքն էր արդեօք, թէ մի այլ հիւանդութեան,—այդ ոչ ոք չիմացաւ,—միայն թէ նա մի շատ աննօրմալ եւ կիսապսիխոպատ դրութեան մէջ ընկաւ, որ եւ՝ առիթ տուեց նրա մօտիկ բարեկամներին ու ազգականներին Դաշայի վրայ դատարանի միջոցով խնամակալութիւն հաստատել, որը պէտք է նրա հարստութեան ու բոլոր գործերի վրայ հսկէր, որպէս զի Դաշան մի որ եւ է յիմարութիւն ու խենդութիւն չանի։

Աննօրմալ ու մանաւանդ մեծ ժառանգութիւն ունեցողի վրայ խնամակալութիւն հաստատելը, ինչպէս գիտէք, մի շատ սովորական բան է։ Բայց եռ հէնց այդ Դաշային յիշեցի երբ տեղեկացայ այն ժողովի մասին, որ ամսոյս 3ին, կիրակի, տեղի էր ունեցել եւ ուր որոշուել է քննիչ մասնաժողովներ հաստատել Դաշնակցութեան ձեռքով կատարուած «կեղեքումների, հարստահարութիւնների ու ոճիրների» ընդհանուր քննութիւն կատարել եւ մի մշտական բիւրօ հաստատել Դաշնակցութեան արարքները կօնտրոլի տակ առնելու համար...

Դաշնակցութիւնն էլ Դաշայի օրին ընկաւ վերջապէս, մտածեցի ես։ Եւ իսկապէս, որպիսի ճակատագրական նմանութիւն։ Ախր դեռ հազիւ մի տարի է անցել այն օրից, երբ Դաշնակցութիւնն էլ Դաշայի նման հասարակութեան աղն ու ծաղիկն էր համարում. ամենքի գուրգուրանքի ու փայփայանքի առարկան էր եւ բոլորն էլ նրա անուանումն էին երգում ու նրա բոլոր կապրիզները մեծահոգութեամբ տանում. իսկ այսօ՞ր։

Օհ, այսօր նա էլ դժբախտ Դաշայի նման չոփուրացել է եւ այնպիսի մի աննօրմալ բան է դառել, որ հէնց երեկուան իր ամենամօտիկ բարեկամները տիպած են նրան էլ Դաշայի նման խնամակալութեան տակ առնելու։ Ի՞րպիսի հեղնութիւն բախտի.. Մի՞թէ անցեալ տարի այս ժամանակ կարելի էր այդպիսի մի բան դուշակել ու ենթադրել անգամ... Դաշնակցութիւնը խնամակալութեան տակ է առնվում!!! Այն Դաշնակցութիւնը, որը դեռ երեկ ամբողջ հայ ազգի միահեծան տէրն էր համարում իրան, մի կատարեալ հայկական կառավարութիւն էր եւ ամբողջ ազգի ճակատագիրը իր թաթերի տակն էր առել, այսօր, իրրեւ մի կիսախելագար ու վնասակար անձնաւորութիւն. Նոյն

թիւն չէր. այլ նախորդների երեւակայութեան ծնունդ մի ստեր, մի ուրեական... ուրիշ ոչինչ։

Սուրէնը մտածութեան թելը կըտրելով կրկին սկսեց դիտել մուչ-մուչ ննջող մանուկին ու համբուրելով նրա ճակատը զգնջաց։

— Երդվում եմ քեզ զաւակս, փնտրել քո մէջ ամեն մի ցնորք, երազ, որքան էլ նա մարդասիրական կեղծ շպարով սեղված լինի, ու գաղափարական կեղծ երանգներ ունենայ։ Երդվում եմ հսկել որ ոչ մի ոգի չը կարենայ հրապուրելով քեզ մատնել ցնորքների, երազների այիարհը, ուր անկեղծ հրազողներ չնչին թիւն միանում են այդ երազները միայն չահագործող բազմանգամ մարդկային հոտեր։ Դու պէտք է սեծանես իրրեւ մարդ բառի ամենալայն իմաստով. առանց ցեղի, դաւանանքի խրտ-

ազգի զանազան չրջանների ներկայացուցիչների կողմից ինամակալութեան տակ է առնուում!!

Բայց ո՞վ է մեղաւոր։

«Մէտուա քի լա վուլիւ, Ժորժ Ֆանդէն!»

Ռ. Մ

«Հոսանք»

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՍԻՆԷՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ Ֆորմօզայի մէջ, անմահ գործիչ եւ նշանաւոր յեղափոխական Թուլեան անունին հիմնուած դպրոցի մը, սրճարանի մը եւ խաղարանի մը բացումին առթիւ համբաւաւոր չէֆ Ցանցառեանի կողմէ արտասանուած ճառ։ կղզւոյն բնիկներէն հինգ հազար ուրթը հարիւր վաթսուն հոգիի առջեւ։

(Անթել հեռագրով հաղորդուած խմբագրութեանս։)

«Տիկիններ և պարոններ.

Ռէքլամը ընել Դաշնակցութեան աւելորդ կը սեպեմ, կը թողում որ գործերը խօսին. և գործերը հոս են, մեծ, հսկայ. քանի որ դաշնակցութիւնը զօրաւոր է, ամենակարող է։

Քանի՞ տարի կրնէ անոր հաստատութիւնը, և սակայն այսօր անոր մասնաճիւղերը, տարածուած աշխարհիս չորս կողմերը ամէն գօտիներու և ամէն շրջանակներու մէջ, կը գործեն յօգուտ այն երկրին տառապող բնիկներուն, ձգտելով անոնց ազատագրութեան զարդացումին, և... մորթուելուն։

Մայրագոյն Արեւելքի այս հեռաւոր սահմաններուն մէջ ալ մուտ գտաւ ան, շնորհիւ մեր գործիչներուն անդուլ յանքերուն. ինչպէս արդէն մուտ գտած է, ու կը գործէ Թուրքիոյ, Բաթակոնիոյ, Նիամ—Նիամներու երկրին, Սպանիոյ, Ռուսիոյ, Սահարայի եւ ուրիշ շատ տեղերու մէջ, ամէն տեղ իր սկզբունքները ու գործելու եղանակը յարմարցնելով տեղւոյն պահանջներուն եւ մեր պէտքերուն։

Ռուսիոյ մէջ սոցիալիստ եղանք, Թուրքիոյ մէջ չզիջանեցանք միանալ միւս յեղ. կուսակցութիւններու հետ. մենք որ ունէինք փառաւոր անցեալը պոնքայի դէպքին, Սասունի կատարածներու և վ/ժած մահափորձի. ու հիմակ հոս, եկանք. որպէսզի ժողովուրդը կրթենք դպրոցով ապագայ սերունդին համար. սրճարանը բացինք, որպէսզի յաճախորդ ու կուսակցական շահինք և խաղատուն մը բացինք, որպէսզի չէզոքները հոն զբաղին ու ժամանակ չի գտնեն մեզ քննադատելու, որովհետեւ ամեն բանի կը հանդուրժենք բայց քննադատութեան երբէք...։

Եւ հիմակ կրնաք ինքներդ բացատրել թէ ինչո՞ւ օսմանցիներու Սուլթանը սեզմէ կը վախնայ, ինչո՞ւ Ռուսիոյ Զարը մեծ տոները չնորհտւորական հեռագիր կը զարնէ մեր կեդրոնական պիւրօին... ի հիւսիսային բեւեռ, և Բլէմանսօ. վախնալով մեր գործունէութենէն Սահարայի մէջ, Գազթային խնդիրներու կարգադրութեան համար. մեր աջակցութեան կը դիմէ

Պարոններ՝, այս ընթացքով. ինչպէս կը տեսնէք. հսկայաքայլ յառաջդիմութիւնով կը տարածուի Հ. Յ Դաշնակցութիւնը. միակը, զօրաւորը եւ ամենակարողը և քիչ ատենէն պիտի տեսնէք որ բովանդակ աշխարհը դաշնակցական պիտի ըլլայ, եւ հայերու ազատագրութեան ճգճիմ պզտիկ գործին տեղ, այն ատեն պիտի ունենանք բովանդակ երկրին ժողովուրդներուն ճակատագիրը մեր ձեռքը, եւ երբ ան ալ ի գլուխ հանենք, որովհետեւ մենք անպասճառ ի գլուխ կը հանենք այն գործը, ոյուն ձեռնամուխ կրլլանք, այն ատեն, ա՛ն այն ատեն, կրսեմ. մեր գործունէութեան շրջանակը պիտի փոխադրենք մոլորակներուն մէջ, ուր Հրատի բնակիչները անհամբեր մեզ կը սպասեն, ու օր չըլլար որ նշանացի սեզ չհաւիրեն։

Զեզի ալ պիտի գանք ո՛վ Հրատի «արիւն արցունք» լացող բընակիչներ. մենք կը ճանչնանք այն վեհ գործը, որուն համար ստեղծուած ենք. ու կրնենք առանց մէկ վարձատրութեան, իբր «մտթէօր»։ մենք միայն կարգապահութիւն կը պահանջենք մեր շարքերուն մէջ. խիստ են մեր օրէնքները, եւ լսած ըլլալու էք հարկաւ թէ ինչպէս. մերկ վիճակի մէջ խարազանեցինք հայ գեղջկուհի մը. որուն պատճառը հիմակ չեմ յիշեր։

Ու բոլոր ասոնց համար է որ ամէնուն շահը կը պահանջէ դաշնակցական ըլլալ. խտացնենք մեր շարքերը, ու երթանք առա՛ջ, առա՛ջ հարթելու համար անհաւասարութիւնները Արեւելքի ու Արեւմուտքի. Հիւսիսի և Հարաւի բնակիչներուն մէջ։

Յիսուս ըսած է. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ.» մենք կրսենք. «Դաշնակցութեան դիմեցէք ո՛վ անանկացածներ ու չայոզածներ, ձեզի պիրքի տէր պիտի ընենք. անօթինե՛ր՝ պիտի կշտացնենք, մերկեր՝ պիտի հագուեցնենք. եւ թէ ուզէք, զէնք ալ պիտի տանք. (այս մասը կրնայ զանց առնուիլ. զէնք չեղած ալ կրլլայ)...

Յիսուսի տշակերտները Հոգին Սուրբի գալուստին սպասեցին սկսելու համար իրենց գործունէութեան. մեր քով, սպասում ալ չիկայ ու արդէն Դաշնակցութեան մասն կազմած օրէն, անհատը փսխուած է. ձկնորսներէն քարոզիչներ կելլեն. ասիկայ բան մը չէ. բոլոր անոնց քով, զորս դաշնակցութեան միջոցով եղած են աս ու ան. գործե՛ր, գործե՛ր աւելի խօսուն կըլլան. Թուեմ օրինակները։

Հարկաւ ծանօթ է ամէնուդ թէ պալքանեան թերակղզիին մէջ կայ Մակեդոնացի միականի թագաւորի մը անունով քաղաք մը, եւ հոն կը գտնուի մեր ամենազօրեղ կոմիտէներէն մէկը. դաշնակցութեան փոխակերպելու հրաշալի զօրութեան ի՛նչ ապացոյցները կը պարունակէ այդ կոմիտէին գործունէութիւնը։ Մենք էինք որ, ատաղձագործէն... խմբագիր չինեցինք. ու երկրին մէջ փորը հազիւ կշտացնող վարժապետէն երեք հարիւր ֆրանք ամսականով.. խմբագրապետ. խաղատուներու եւ բոզատուներու մէջ բթացած ուղեղով մարդէն հանեցինք գրականութեան ուսուցիչ որ հիմակ արդիւնաւորապէս կը պաշտօնավարէ նոյն քաղաքին համալսարանին մէջ. պարզ գրաշարը. եղաւ կեդրոնական կոմիտէի անդամ, եւ խեղճուկ երկաթագործը. նշանաւոր գործիչ. որուն սխրագործութիւնները. Պոլսոյ... մէջ, լսած էք հարկաւ...։

Ի՞նչպէս կարելի է անտարբեր մնալ այստեսակ հանրօգուտ, հրաշալի. զօրաւոր, ամենակարող կուսակցութեան մը հանդէպ. շուտ ըրէք. անդամակցեցէք անոր... շո՞ւտ... շո՞ւտ. ժամանակը ոսկի է...։

(Կղզիին բնիկները, որոնք անտեղեակ են մեր քաղաքակրթութեան պայմաններուն, ու չեն գիտեր ծափահարելու սովորութիւնը, սկսան իրենց գոհունակութիւնը եւ հաւանութիւնը յայտնել.. փոնգտալով, փոնգտուք՝ որ լսուեցաւ «ծագաց ի ծագս աշխարհիս» «վասն ամենամեծ փառացն դաշնակցութեան»։

Ու յետոյ, ամէնքը հանդիսաւորապէս, անդամ գրուեցան Դաշնակցութեան. որ այսպէսով մատ մը ալ զօրացաւ։

ՊԻՏԱԿ

ՕՐԸ ՕՐԻՆ

ԻՏԱԼԻՈՅ ԹԱԳՈՒՀԻՆ ՆՇԱՆԱՒՈՐ ՆԿԱՐՉՈՒՀԻ

Նկարներու ցուցահանդէսին, որ ամէն տարի տեղի կունենայ Վենետիկի մէջ այս անգամ պիտի մասնակցի և երիտասարդ թագուհին իր նկարները ցուցադրելով։

Այդ մասնակցութիւնը այժմէն իրարանցում մը ձգած է նկարչական բոլոր շրջանակներու մէջ. ամէնքն ալ անհամբերութեամբ կսպասեն թէ ինչ պիտի երեւան գայ թագուհու վրձինին տակէն։ Կը վստահեցնեն թէ՝ իր հռչակաւոր նկարչութեամբը պիտի վաւերացնէ իր հռչակաւորութիւնը։ Անոր նկարները ցուցահանդէսի մէջ պիտի աչքի զարնեն իրենց գեղարուեստականութեամբ։ Մայրական հոգերէն յետոյ թագուհուն ամենամեծ գոհունակութիւնն է իր արհեստանոցին մէջ գտնուիլը, որ աշխատութեան միջոցին գուցէ նոյն իսկ թագաւորին համար։

Կըսեն թէ այդ՝ թագաւորին նկարչութիւնը հովանաւորման գլխաւոր պատճառներէն մին է։ Վենետկեան, ցուցահանդէսին կազմակերպիչները, որոնք թագուհուն հետ յարաբերութեանց մէջ են կը հաստատեն թէ թագուհուն նկարածները կատարեալ անակնկալ պիտի ըլլան այցելուներուն համար։

Իտալիոյ գեղարուեստական աշխարհը չափազանց անհամբեր է և կուզէ շուտով տեսնալ. իսկ

ղութեան նեղ եւ վտանգաւոր զգացումներու Խորութիւններ. որոնք մարդկութեան գլխին եկած բոլոր տանջանքներուն հիմքն ու դրդապատճառն են ներկայացել մինչեւ օրս։

— Ո՛չ, մի՛ տուր այդ երդումը.. զաւակիդ, քո հակառակ տիպն ես որոշում գարձնել դլան. մի մոռցիր որ այսօր քո կողմից երազ ընդունվածը եղել է քո կեանքի փարոսը. այդ երազին զոհվել են քո ամենասիրելի մարդիկը. դու նրան նիրել ես կեանքիդ ամենալաւ մասը....

— Զայն, ով ես դու. ասենք չեմ էլ ուզում իմանալ ով լինելդ Սիրելի մարդիկ ոչնչացան ցնորքի համար. երանի նրանց. ոչնչացան առանց գիտակցութեանը հասնելու որ երազի համար ոչնչացան։ Ոչնչացան առանց դառնութիւնը ունենալու որ երազում են եւ երազի համար են կորչում։ Ինձ նմանները եւ ես աւելի դժբախտներ ենք. որովհետեւ ապրեցինք եւ զգացինք որ երազել ենք եւ մեր սիրելի ընտրեալները կորան լոկ երազի համար։ Ինձ նմանները եւ ես այդ ցնորքների կենդանի զոհերն ենք. փշրված զոհերը.. Դու արգելում ես որ զա ակիս երդվեմ։

Ես կրկնում եմ այդ երդումը, այո այս դեռափթիթ կեանքը, որի զարգացումը ինձ է յանձնված բնութեան օրէնքով. պէտք է վանեմ ցրնորքներից. որովհետեւ չեմ ցանկանում որ նա սնվի մինչեւ օրս անդիտակից, դիւթիչ եւ խարուսիկ ոգու մատակարարելիք հաշիշով եւ ոչ էլ մեզ պէս ողջ զոհերի նման ջախջախվի հիասթափումների անխնայ հարուածների տակ։

— Եւ դա դաւաճանութիւն է, դա թուլանոգութիւն է, դա սրբապղծութիւն է. ճշաց ձայնը։ Ես այն ոգին եմ որին հետեւեցին ահա այդ մարդիկ. որոնց աչքերը պատերից քեզ են նայում. որոնք քո ուսուցիչները, քո մարտակից ընկերներն են եղել եւ իմ երկրպագուները։ Ահա նրանք չանթեր են արձակում, տես ողջացել են. տե՛ս ինչպէս են փայլում նրանց աչքերը։ Նրանք ինձ աղերսում են չանթահարել քեզ. եւ այդ ժանուկին՝ որ արդէն ինձ երկրպագողների նոր կազմվելիք շարքերումն էր նշանակված։

— Հը, դու ե՛ս, խաբող, հրապուրող, ոգի-երազ, ցնորք. ուտողը ազնիւ երազողների եւ կերակրողը քեզնից կերված երազողների յիշատակը չահագործողներին —որոտաց Սուրէնը. ոչ, այս ժանուկը ճշմարտութեան եւ մերկ իրականութեան երկրպագու պէտք է լինի։ Նա չէ ժառանգելու այն ինչ որ մեր սերունդը ժառանգեց այդ բարի եւ դիւրահաւատ նախահայրերից. որոնց յիշատակով ուզում ես ինձ ետ կասեցնել իմ երդումից։ Սպառնում ես ինձ, որովհետեւ քո ոչնչութիւնը գիտակցեցի, եւ գիտակցել պէտք է տամ այս մանուկին։ Դուրս այս սենեակից. դուրս, որովհետեւ այս տան մէջ ցնորքները այլեւս տեղի չունեն. այս տեղ պէտք է թագաւորեն միայն ճշմարտութիւնը ու մերկ իրականութիւնը։ Հեռու ցնորքները. որչափ նրանք դիւթիչ եւ իրականութեան նմանութիւն ունենան։

Ո՛ռո հո՛ւ հո՛ւ, մոնչեց մրրիկը...

ՎԱՐԻՕ

ըստ երևոյթին թագուհին աւելի յուզուած վիճակ մը ունի իր նը կարները ցուցադրելու համար։

* * *

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԸ

«Նիւ Եորք Հերալդ» թերթին հետեւեալը կը հեռագրեն.

«Շահը ուրբաթ սարսափելի գիշեր մը անցուց. երիկամունքակոն գործունէութիւնը դադրած է և հիւանդը սարսափելի ցաւեր կզգայ։ ան շարունակ կը հեծէ, ախ ու օխ կընէ և սարսափով կը շշնջայ. «կը մեռնիմ, ապատեցէք զիս».

Բնորոշ է որ շահը մահին առջեւ սարսափելի կը վախնայ։

Բոլոր լսուածներու համաձայն, տխրալի վիճակի մը մէջ կը գտնուի։ Ուժերը բոլորովին կորսնցուցած է. ամբողջ մարմինը վէրքերով է ծածկուած, որոնք լի են թարախով։

Անկարելի է առանց ցաւ զգալու շարժիլ։ Այժմ լուր պտակած է շրջապատուած կիներով։

Մահու պարագային հաւանի թէ անկարգութիւններ տեղի ունենան, որովհետեւ գահաժառանգը ներկայ և միջնա/շխանութիւն չը պիտի տեղի ունենայ։ Շահին երկրորդ եղբայրը իր բոլոր յաւակնութիւններէն հրաժարած է. իսկ երրորդը ոչ է դժուարութիւն յարուցանելու կացութեան մէջ չի գտնուիր։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկաթուղիին գործագուլին թողած ազդեցութիւնը հետզհետէ կը մեղմանայ և թրէնների երթեւեկը քիչ թէ շատ կանոնաւոր կերպարանք կառնու։ Գործաթող ընկերներէն շատերը սկսած են վերադառնալ. սակայն անոնցմէ կը պահանջուի նոյէն խնդրագիր տալ ընդունուելու համար։ Շատերը դատի են թարկուած են։

Սոցիալիստները ժողովներ կընեն ի նպաստ գործաթող ընկերներու։ Միայն նեղ սոցիալիստները հակառակ են պարագաները անպաստ համարելով։

Սոֆիայի Ռուսոլովիստներն ալ պաշտպան կը հանդիսանան գործաթող ընկերներուն, թէև գործաթողը կը դատապարտեն, բայց իրաւք երկաթուղիի պաշտօնեաներու վիճակը անտանելի գտնալով կը պահանջեն որ կառավարութիւնը չափով մը գոհացում տայ. և կենսաթոշակներէն չը զրկէ։

Կը կարծուի թէ քանի մը օրէն բոլոր տեսակի թրէններու երթեւեկը բոլորովին պիտի կանոնաւորուի։

Ամբողջ գործաթոգի ժամանակին մէջ գործաթող ընկերները ոչ է խռովութիւն մը չը յարուցին, ուշխաղաղ անցուցին իրենց օրերը։

— Բոսա. հեռագրական պաշտօնեաներու գործաթոգին լուրը անհիմն է։ Այդ նպատակով աշխատողներ եղած են, բայց չեն յաջողած.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Դեկտ. 27ին Պոլսէն կը հեռագրեն.— Երէկ Օրթաքէոյի մէջ հրդեհ տեղի ունեցաւ. որ ողորմելի երեւոյթ մը ներկայացուցիչ տեղ, սակայն այդ հրդեհը անկարագրելի սարսափ պատճառեց անմիջապէս հեծելազօրքի և քանի մը վաշտ հետեւակ զօրքի գալուն պատճառով։

Իշխանութիւնները կարծեր են թէ այդ նշան է հայկական յեղափոխական շարժման մը, որովհետեւ Լոնտոնէն եկած երկու հայեր Լոնտոնի Թուրք դեսպանին յայտարարած են որ այդ տեսակ շարժումմը պիտի տեղի ունենայ այս օրերս։

— Թուրք կառավարութիւնը ընդդիմութիւն ցոյց կուտայ Եգիպտոսի մէջ պալքանեան պատուիրակներ ներկայացուցիչներ հաստատուելուն։

— Թուրք կառավարութիւնը նախազուշակելով որ պետութիւնները խստիւ պիտի պահանջեն Մակեդոնիոյ դատարաններուն բարենորոգումները ինք Բարձ. Դրան հովանաւորութեան տակ բարենորոգիչ դատական յանձնախումբ մը կազմեր է։ Այդ յանձնախումբը ծրագիր մը պիտի մշակէ. իսկ կառավարութիւնը երկու դատական վերատեսուչներ պիտի ղրկէ։ Սակայն ռուս եւ Աւստրիական դեսպանները առանց կարեւորութիւն տալու այդ կարգադրութեան մեծ պետութեան դեսպաններուն ծրագիր մը առաջարկեր են ուսումնասիրելու համար։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թեհրանէն 27 դեկ. կը հեռագրեն. Մուզաֆէրէտին Շահը մեռաւ. ծնուած էր 1853ի մարտ 12ին, գահը բարձրացաւ 1896ի ապրիլ 19ին։ Դահաժառանգն է Մուհամմէտ—էլ—Միրզա ծնած 1872ի յունիս 10ին։

ՌՈՒՍԻԱ

Թեթերսպուրկի քաղաքապետը սպանուեր է տելօրիստներու ձեռքով։

— Դեկտեմբեր 27. Թեթերսպուրկի շրջանի զինուորական դատարանի բակին մէջ երիտասարդի մը, որ զինուորի զգեստներ կը կրէր, ձեռքով սպանուեր է գլխաւոր դատախազ Բավլոֆ։ տերօրիստը անծանօթ մըն է և ձերբակալուած է։

Բավլովի դէմ սարսափելի ատելութիւն կար. նախորդ Ցուլայիին մէջ զայն մինչ կը հայհոյեն. ոճրագործ անուանելով։

—28 դեկ. Թեթերսպուրկէն կը հեռագրեն.—զօրավարներ Քաուլպարս և Կրիմպէնպէրկ Քուրապատկինը մենամարտի հրաւիրած են, որովհետեւ վերջինս պատնէշ կը մեղադրէ Մանջուրիոյ պատերազմին վերաբերեալ խնդիրներու մէջ։

Քուրապատքին Կովկասի ընդհանուր նահանգապետ պիտի նշանակուի Վարանցով Տաշքովի փոխարէն։

—Համբորդ մը Թեթերսպուրկի Կրանտ Օթէլին մէջ իջնելով և անմիջապէս ոստիկաններէ շրջապատուելով, նախ հրացանաձգութեան բռնուեր է ոստիկանի մը հետ, ապա անձնասպան եղեր է։ Անձնասպանը յեղափոխական մը եղեր է և կրցեր է իր քովը գտնուած բոլոր գրութիւնները այրել։

ՍԵՐԲԻԱ

Եւրոպական մամուլի մէջ հետզհետէ կը տարածուի Թեթրիթագաւորին գահէն հրաժարելու լուրը։

28 դեկեմբ. Հոմէն կը հեռագրեն որ Թեթրը Իտալիոյ թագաւորին կարծիքը հարցուցած է գահէն հրաժարելու մասին, ի նպաստ կրտսեր Ալէքսանդր որդուն։

ՖՐԱՆՍԱ

Դեկտ. 27ին Բարիզէն կը հեռագրեն.— Ֆրանսացի գիտնականն խուզարկու Էտուարտ Տութ որ գիտնական նպատակով կը ճամբորդէր Մարոքի մէջ Մոկատուրի ֆրանսական հիւպատոսի ատենադպիրին հետ մէկտեղ գերի բռնուած և տարուած է Մարաքէշ։ Կառավարութիւնը ռանդուն միջոցներ պիտի ձեռք առնէ այդ ճամբորդները աղատելու համար։

—Հասարակապետութեան թիկնապահ զօրաց երկու վաշտեր աղմկալից ցոյցեր ըրին, բողոքելով իրենց ծառայութեան դժուարութեանց և վճարի սակաւութեան համար։ Դիզոնները կ'երգէին «Ինթերնասիոնալ» երգը։ Գենութիւն սկսուած է։

— Թուլոնի մէջ մեռեր է Միխայիլ փաշան, թուրք փարոսներու վարչութեան պետը և նախագահը Պոլսոյ քարափներուն ընկերութեան։

——

ՀՈՒՆԳԱՐԻԱ

28 դեկտեմբերին Պուտապէշթէն կը հեռագրեն թէ՝ կառավարութիւնը արգիլեց մուտքը «Քուրիկ Էօրօպէէն» թերթի, որովհետեւ թերթը կը դատապարտէր ունգարներու սլաւ ցեղերուն դէմ կատարած խստութիւնները։

— Ունգարիոյ կրօնական կուսակցութիւնը այժմ զբաղած է Ֆրանսայի կղերականութեան դրամական օգնութիւն հասցնելու խնդրով։ Առաջակ եղած է անգամ որ Ֆրանսայի քահանաներուն մէկ մասը Ունգարիա ընդունուին։ Բայց այդ ծրագրէն հրաժարած են Բրօխոսսիա եպիսկոպոսին դիմադրութեան պատճառով։ Եպիսկոպոսը պետն է Ունգարիոյ ընկերավորական քրիստոնեաներու կուսակցութեան։

Նոր Տարւոյ առթիւ «Շարժումի» շրջեքսբթուան թիւը չը պիտի լոյս տեսնէ։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բացուած է բաժանորդագրութիւն

Ա. Դիւմայի

«ԲԱՍԴԻԼԻ ԱՌՈՒՄԸ»

Հռչակաւոր պատմական գործին՝ Ֆրանսական մեծ յեղափոխութեան ժամանակից։

Թարգմանութիւն

Մ. Պաղտասարեանի

Գիրքը 300 էջերէ բաղկացած և 5 կէս ծալով եւ ընտիր թղթի վրայ տպագրուած. մամուլի տակն է եւ լոյս կը տեսնի շուտով։

Պարսկաստանի համար՝ կազմածը 10 ղրան. թղթակազմ 8 ղր.

Ռուսաստան թղթակազմ	1 ռ.	50 կ.
Եւրոպա	»	4 ֆրանկ.
Ամերիկա	»	1 դոլար

Գրավաճառներին 20 առ հարիւր զեղչ կը տրուի

փոստի ծախս մեզ է պատկանում։

Պատուէրները ուղարկել կ ան խ ի կ դրամով

Հրատարակիչ Մ. Պաղտասարեանին

Թաւրիզ (Պարսկաստան)

—o—

Печатница „Взаимность“ Варна.